

սական նուիրումով կը պահպանէին Տիրոջ, առաքելոց եւ սրբոց յիշատակները: Այդ յիշատակները Ս. Երկրին մէջ Քրիստոսի Գեղեզմանէն սկսեալ մէյմէկ լուսաւոր կանթեղներ են, որ կը լուսաւորեն քաղաքը այն քրիստոնեաներուն, որոնք Աւետարանով կ'ազգեն հոգեւոր կեանք ունենալ եւ ծառայել Աստուծոյ: Ս. Երկրին այդ նուիրական Տեղերն են՝ ուր Քրիստոսի Համբարձումէն յետոյ ապրած են մարդեր հոգեւոր կեանքով մը, եւ պէտք է գիտնալ թէ նոյն կեանք ունեցողները շատ շեմեռանդութեամբ եւ ուշադրութեամբ պահպանած են աւանդութիւնները նոյն նուիրական Տեղերուն:

Երուսաղեմ, արդէն ի սկզբանէ ուներ եպիսկոպոսաց յաջորդութիւն մը, եւ մշտապէս գոյութիւն ունեցող քրիստոնեայ համայնք մը ապահովելու համար վաւերական յիշատակներու փոխանցումը եւ հեռաբնակ ուխտաւորներու հաղորդել բերանացի աւանդութիւններէ քաղուած տեղեկութիւններ:

Ս. Տեղեաց այս աւանդութիւնները ունէին անուշտ յասուկ արձանագրութիւններ որոնք պարբերաբար կը կարգադրուէին Ս. Տեղեաց պատշտոններուն բացատրելու եւ հաղորդելու համար անոնց որ շեմեռանդն հաւատով կուգային երկրպագել սնօրինական Ս. Տեղերը:

Երուսաղեմի Ս. Տեղեաց եկեղեցիները ցարդ կը գործադրեն այդ սովորութիւնը. Ս. Երկրին այլեւայլ ցաւալի պատահարներուն առ թիւ, Սրբավայրերու գրաւոր յիշատակարաններ փոխադրուած են այլուր եւ մեծագոյն մասամբ կորսուած: Եկեղեցական պատմութենէն կը ստրկինք թէ՛ եկեղեցեաց եպիսկոպոսները ունէին հաւատոյ դաւանութիւնները բացատրող եկեղեցւոյ աւանդական մեկնութեանց քղածրարները: Ս. Գիբեէն զաս՝ նոյն քղածրարները մեծ կարեւորութիւն ունէին